**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»**
Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

_____ **Հ.Վ. Հովհաննիսյան**

«26» Մարտ 2026թ.

**ԿԱՐԾԻՔ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**Ինեսա Վահագի Նուշիկյանի Ը.00.03՝ - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 2026 թվականի մարտի 19-ին կայացած նիստում: Նիստին ներկա էին ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար տ.գ.թ., դոցենտ Գ.Է. Սահակյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտ Գ.Մ. Մնացականյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Է.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Հ.Հ. Դովլաթյանը, տ.գ.թ., ասիստենտ Լ.Հ. Կարապետյանը տ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Նահապետյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Մ. Մուրադյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Վ. Քառյանը, Լ.Մ. Ասրյանը:

***Ատենախոսության թեմայի արդիականությունը***

Ժամանակակից տնտեսության զարգացման պայմաններում բանկային համակարգերը գտնվում են ակտիվ թվայնացման և տեխնոլոգիական վերափոխումների փուլում, ինչի արդյունքում նորարարական պրոդուկտների ներդրումը դառնում է բանկերի գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Ֆինանսական շուկաներում մրցակցության սրումը, ֆինտեխ լուծումների արագ տարածումը և հաճախորդների պահանջների փոփոխությունը բանկերին ստիպում են մշտապես կատարելագործել իրենց ծառայությունները և կիրառել նորարարական մոտեցումներ:

ՀՀ բանկային համակարգի համար այս գործընթացները ունեն առանձնահատուկ նշանակություն, քանի որ, մի կողմից, առկա է զարգացման և արդիականացման զգալի ներուժ, իսկ մյուս կողմից՝ պահպանվում են մի շարք խնդիրներ՝ կապված տեխնոլոգիական պատրաստվածության, կառավարման մեխանիզմների և շուկայի առանձնահատկությունների

հետ: Այս հանգամանքները պայմանավորում են նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրների համակարգված ուսումնասիրության և դրանց արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը:

Միաժամանակ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը բանկային ոլորտում առաջացնում է ոչ միայն նոր հնարավորություններ, այլև նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են գիտական հիմնավորում և գործնական լուծումներ: Հատկապես կարևոր է նորարարությունների ներդրման տնտեսական արդյունավետության, ռիսկերի և երկարաժամկետ ազդեցության համակողմանի գնահատումը, ինչը թույլ է տալիս ապահովել բանկային համակարգի կայուն զարգացումը:

Այս տեսանկյունից թեման ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն՝ ուղղված բանկային համակարգի արդյունավետության բարձրացմանը, նորարարական քաղաքականության կատարելագործմանը և ֆինանսական միջավայրում մրցունակության ամրապնդմանը:

### *Հետազոտության նպատակներն ու խնդիրները*

Ներկայացված ատենախոսությունում որպես նպատակ ձևակերպված է՝ ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրները և բացահայտել զարգացման հնարավորությունները:

Ատենախոսության սահմանված նպատակին հասնելու համար հեղինակը առանձնացրել է հետևյալ հիմնախնդիրները.

- ✓ ուսումնասիրել բանկային նորարարությունների առանձնահատկություններն ու տեսակները,
- ✓ ներկայացնել բանկային նորարարական պրոդուկտների ներդրման միջազգային փորձը և զարգացման միտումները,
- ✓ ուսումնասիրել բանկային համակարգում նորարարական պրոդուկտի ներդրման արդյունավետության գնահատման մեթոդները և մոտեցումները,
- ✓ գնահատել ՀՀ առևտրային բանկերի նորարարական գործունեությունը և առաջարկվող նորարարական լուծումները,
- ✓ հետազոտել ՀՀ բնակչության կողմից բանկային նորարարական պրոդուկտների կիրառման մակարդակը և դինամիկան,
- ✓ գնահատել նորարարական պրոդուկտների ներդրման ֆինանսական ազդեցությունը,
- ✓ բացահայտել նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրները ՀՀ առևտրային բանկերում,
- ✓ մշակել ՀՀ առևտրային բանկերում նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման մոդելներ,
- ✓ վերլուծել ՀՀ առևտրային բանկերում պրոդուկտների ներդրման հեռանկարները:

### *Հետազոտության օբյեկտը և առարկան*

Հետազոտության **օբյեկտը՝** ՀՀ առևտրային բանկային համակարգն է՝ որպես նորարարական պրոդուկտների ձևավորման, զարգացման և ներդրման հիմնական միջավայր, իսկ **առարկան՝** ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման խթանման, հիմնախնդիրների բացահայտման և արդյունավետության բարձրացման կառավարման մեխանիզմների համալիր կատարելագործման հնարավորությունները:

### *Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը*

Ատենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

✓ Տեխնոլոգիական–կազմակերպչական–միջավայրային (TOE) և ռազմավարական (TOES) մեթոդաբանությունների կիրառմամբ ՀՀ առևտրային բանկերում համակարգված ձևով բացահայտվել և դասակարգվել են նորարարական բանկային պրոդուկտների ընդունման վրա ազդող հիմնական տեխնոլոգիական, կազմակերպական և միջավայրային խոչընդոտները, ինչը հնարավորություն է տվել գիտականորեն հիմնավորել նորարարությունների ներդրման սահմանափակող գործոնների կառուցվածքն ու ազդեցության մակարդակը:

✓ Մշակվել է մատնահետքերի նույնականացման արդյունավետության ինդեքս (Fingerprint Identification Efficiency Index – FIEI) մոդել, որը հիմնված է ներդրումների վերադարձելիության (ROI), ծախս–օգուտ վերլուծության (CBA) և արժեքի արդյունավետության (VE) ցուցանիշների վրա, որը հնարավորություն է տալիս նորարարական տեխնոլոգիաների ներդրման, շահութաբերության աճի և գործառնական ռիսկերի նվազման համադրմամբ քանակապես գնահատել և բարելավել առևտրային բանկի գործունեության արդյունավետությունը:

✓ Մշակված վարկավորման արհեստական բանականության արդյունավետության ինդեքսի (AI Lending Efficiency Index – AILEI) մոդելի հիման վրա գնահատվել է արհեստական բանականության ներդրման ազդեցությունը բանկային վարկավորման գործընթացների արդյունավետության, շահութաբերության և վարկային ռիսկերի կառավարման վրա: Մոդելը հնարավորություն է տալիս նաև բացահայտել ներդրման ֆինանսական և գործառնական արդյունքները՝ հիմնվելով տոկոսային եկամտի, գործառնական ծախսերի և վարկային կորուստների փոփոխությունների վրա:

✓ Կառուցվել է խելացի պայմանագրերի ավտոմատացման ֆինանսական ազդեցության գնահատման մոդել (SCVM), որը հիմնված է օպերացիոն, իրավական, ժամանակային և եկամտային ցուցանիշների համակցված գնահատման վրա: Մոդելը թույլ է տալիս քանակակապես գնահատել խելացի պայմանագրերի ներդրման տնտեսական արդյունավետությունը և բացահայտել բանկի շահութաբերության աճի, ծախսերի նվազման ու գործընթացների օպտիմալացման հիմնական գործոնները:

✓ Մշակվել է բանկային նորարարական արդյունավետության համակցված ինդեքս՝ BIECI (Bank Innovation Efficiency Composite Index), որը հիմնված է հեղինակային FIEI, AILEI և SCVM երեք մոդելների

վրա և որը թույլ է տալիս քանակապես գնահատել բանկային նորարարական տեխնոլոգիաների համակցված ազդեցությունը՝ միավորելով օպերացիոն արդյունավետության, ֆինանսական արդյունքների, իրավական ծախսերի նվազման և գործարքների արագացման ցուցանիշները, հնարավորություն տալով գնահատել և համեմատել առևտրային բանկերի նորարարական ակտիվությունը և բացահայտել բանկի գործունեության իրական արդյունավետությունը նորարարությունների ներդրման պայմաններում:

### *Հետազոտության ծավալը և կառուցվածքը*

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 158 էջի վրա՝ առանց հավելվածների:

### *Ատենախոսության հիմնական բովանդակությունը*

**Ներածական** բաժնում հիմնավորված կերպով ներկայացվում է ընտրված թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը, հստակ ձևակերպվում են հետազոտության նպատակը և դրանից բխող խնդիրների շրջանակը: Սահմանվում են ուսումնասիրման օբյեկտն ու առարկան, ներկայացվում են կիրառված տեսամեթոդաբանական մոտեցումները և տեղեկատվական հիմքերը: Միաժամանակ առանձնացվում են աշխատանքի գիտական նորույթը և դրա կիրառական արժեքը՝ շեշտադրելով ստացված արդյունքների հնարավոր կիրառելիությունը բանկային համակարգում:

Ատենախոսության առաջին՝ **«Նորարարական պրոդուկտների ներդրման տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում համակարգված ձևով ներկայացվում են բանկային ոլորտում նորարարությունների տեսական հիմքերը՝ բացահայտելով դրանց էությունը, դասակարգման մոտեցումները և գործառնական առանձնահատկությունները: Հիմնավորված կերպով դիտարկվում են նորարարական լուծումների գնահատման ժամանակակից մեթոդաբանական մոտեցումները՝ ընդգծելով դրանց կիրառման հնարավորությունները ֆինանսաբանկային համակարգում: Բացի այդ, իրականացվում է միջազգային փորձի համադրական վերլուծություն, որի արդյունքում առանձնացվում են այն հիմնական օրինաչափությունները և զարգացումները, որոնք կարող են ծառայել որպես ուղենիշ տեղական միջավայրում նորարարությունների ներդրման համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Նորարարական պրոդուկտների կիրառման վերլուծությունը և առկա իրավիճակը ՀՀ բանկային համակարգում»** գլխում իրականացվում է Հայաստանի բանկային համակարգում նորարարական գործընթացների բազմակողմանի վերլուծություն՝ ներառելով ինչպես բանկերի գործունեության առանձնահատկությունները, այնպես էլ սպառողների վարքագծային միտումները: Ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել նորարարությունների տարածման մակարդակը, գնահատել դրանց կիրառման դինամիկան և բացահայտել համակարգում առկա հիմնական խոչընդոտները: Վերլուծությունը

կատարվում է ոչ միայն նկարագրական, այլև պատճառահետևանքային տեսանկյունից՝ հնարավորություն տալով ձևակերպել հիմնավորված հետևություններ նորարարական գործընթացների արդյունավետության վերաբերյալ:

Ատենախոսության երրորդ՝ **«Նորարարական բանկային պրոդուկտների ներդրման հիմնուղիները և դրանց ազդեցության գնահատում»** գլխում առաջարկվում են բանկային համակարգում նորարարական զարգացման ուղղություններ և մշակվում են դրանց գնահատման համապատասխան գործիքներ: Հիմնավորվում է տեխնոլոգիական լուծումների ազդեցությունը բանկերի ֆինանսական և գործառնական արդյունքների վրա, ինչպես նաև ներկայացվում են զարգացման հնարավոր սցենարներ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այն մեխանիզմներին, որոնք կարող են նպաստել նորարարությունների արդյունավետ ներդրմանը և դրանց երկարաժամկետ ազդեցության բարձրացմանը:

Ատենախոսության եզրափակիչ հատվածում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները՝ ձևակերպելով գիտականորեն հիմնավորված եզրակացություններ և գործնական առաջարկություններ:

### *Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ*

1. Ներածություն բաժնի էջ 3-ում նշվում է՝ «Բանկային նորարարությունները դիտարկվում են ոչ միայն որպես տեխնոլոգիական առաջընթաց, այլև որպես մրցակցային առավելության ձևավորման, ֆինանսական միջավայրի կայունության ապահովման և ծառայությունների որակի բարձրացման կարևոր գործիք»:
   Սա միակողմանի և թերի պնդում է, քանի որ նորարարությունները նաև բարձրացնում են ռիսկերը՝ cyber risk, model risk, operational risk: Նորարարությունները կարող են ինչպես բարձրացնել արդյունավետությունը, այնպես էլ առաջացնել նոր տեսակի ռիսկեր, ուստի դրանց ազդեցությունը ֆինանսական կայունության վրա երկակի է: Աշխատանքում ավելի շատ անդրադարձ է կատարված դրանց ներդրման և արդյունավետության գնահատմանը: Աշխատանքը կշահեր, եթե ի թիվս քննարկված՝ արդյունավետության, եկամուտների և ծախսերի դիտարկում վերլուծություններին զուգահեռ դիտարկվեին վերոնշյալ ռիսկերը և դրանց արդյունավետ կառավարումը: Որոշակի թվային տվյալներ կան, բայց համեմատություն և վերլուծություն առկա չէ:
2. Ներածություն բաժնի էջ 3-ում նշված է՝ «...վերջին տարիներին բանկային գործունեությունն ամբողջությամբ անցում է կատարում թվային և տեխնոլոգիապես հագեցած գործառնական մոդելների»: ՀՀ-ում կանխիկի շրջանառությունը դեռ մեծ դեր ունի, ֆիզիկական մասնաճյուղերը դեռ կարևոր են, կարծում եմ՝ բանկերը անցում են կատարում, բայց ոչ ամբողջությամբ:
3. Ատենախոսության էջ 8-ում Ջ.Շումպետերի միտքը ներկայացված է ճիշտ, բայց այն վերաբերվում է մակրոտնտեսագիտությանը: Չէ որ բանկային ոլորտում ռիսկերը միջավայրը, առանձնահատուկ են, կարելի էր ներկայացնել ադապտացված մեկնաբանություն:

4. Ատենախոսության էջ 31-ում նշվում է՝ «...Բարձր VE արժեքը և ROI-ի գերազանցող մակարդակները հաստատում են ներդրման ռազմավարական հաջողությունը նույնիսկ փոքր շուկայի պայմաններում»: Խոսքը գնում է Սինագապուրի բանկային համակարգի մասին, որը ամենևին փոքր չէ, և այն Ասիայում և աշխարհում խոշորագույներից է:
5. Ներածության 3-րդ էջում փաստարկված չէ հեղինակի այն թեզը, ըստ որի «թվայնացման և նորարարական մոդելների ներդրման գործընթացները ՀՀ բանկերում բախվում են կազմակերպական, տեխնոլոգիաների ու միջավայրի հետ կապված սահմանափակումների:»
6. Ատենախոսությունում հեղինակը նշում է բանկերի միաձուլման մասին, այնինչ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկերը չեն կարող վերակազմակերպվել միաձուլման ձևով: Բացի այդ, վիճելի է էջ 55-ում նշված հետևյալ միտքը՝ «...բանկերի միաձուլումների, միացումների և խոշորացումների խրախուսումն էր, որը պետք է հանգեցներ բանկային համակարգի կողմից ավելի որակյալ և մատչելի ծառայությունների և առողջ մրցակցային դաշտի ձևավորմանը»: Իրականում, սովորաբար, տեղի է ունենում հակառակը:
7. Ցանկալի կլիներ քննարկել նաև բանկերի մասնաճյուղերի թվաքանակի զգալի կրճատման հետևանքով նրանց աշխատակիցների հետագա զբաղվածության հարցը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինեսա Վահագի Նուշիկյանի «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, դրանց կիրառման խոչընդոտների նվազեցմանը և նորարարական գործունեության զարգացման հիմնավորված ուղղությունների ձևավորմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 10 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հետևաբար, **«Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի

կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Ինեսա Վահագի Նուշիկյանը** արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 19.03.2026 թ.-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 6):

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝** **Ա.Մ. Մուրադյան**

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝** **Ս.Ս. Նահապետյան**

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.՝** **Կ.Է.Սահակյան**

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ՝** **Գ.Է.Սահակյան**

**Գ.Է.Սահակյանի, Կ.Է.Սահակյանի, Ա.Մ.Մուրադյանի և Ս.Ս.Նահապետյանի ստորագրությունները հաստատում եմ՝**

**ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝** **Մ. Հ. Հովհաննիսյան**

25.03.26թ.